

ԱՐԱՐԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(Նախֆան արարեների արշավաճեր Հայաստան)

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Առ այսօր հայագիտության մեջ իշխում է այն կարծիքը, թե արաբները հետ հայերի առաջին շփումները տեղի են ունեցել միայն VII դ. 40-ական թվականներից սկսած, և, հետևաբար, արաբերենից կատարած հայերենի փոխառություններն էլ VII դ. առաջ լինել չեն կարող*։

Հայագիտության մեջ արմատացած այս կարծիքը տարածվել սկսեց XIX դ. 90-ական թվականներից, երբ լույս տեսավ Հ. Հյուբշմանի «Սեմական փոխառյալ բառեր հայերենի մեջ» ուսումնասիրությունը¹։ Ինչպիսիք աշխատության մեջ նա գրում է. «Հայք տեղով զատված էին արաբացիներեն, ուստի հազիվ էր վարուն արաբական աշխարհակալությամբ ուղղակի հարաբերության մեջ մտան արաբացվող հետ»²։ Ինչպիսիք կարծիքն անվերապահորեն որդեգրվեց հայագետների կողմից և բազմիցս ընդգծվում է հայոց պատմությանն ու հայերենի բառաշարների քննությանը նվիրված ուսումնասիրություններում³։

Գիտության մեջ նման սխալ տեսակետի հիմնավորմանը, անշուշտ, մեծապես նպաստել է Հ. Հյուբշմանի հեղինակությունը։ Մինչդեռ արաբների կողմից Հայաստանը նվաճվելուց դեռ շուտ առաջ, V դ. սկսած, հայ մատենագրության մեջ բազմաթիվ արաբերեն բառերի դործածության փաստը թույլ չի տալիս համաձայնվել մեծավաստակ գիտնականի այն եզրակացության հետ, թե հայերը անջրպետված են եղել արաբներից և միայն VII դ. հետո «ուղղակի հարաբերության մեջ մտան արաբացվող հետ»։ Հայ պատմիչներն ու ավանդությունը արաբներին գիտեն որպես դրացիներ՝ նրանց կողմից Հայաստանը նվաճվելուց շատ առաջ։

Մինչև VII դ. հայերենին անցած արաբերեն բառերի քննությանն անցնելը, բնականաբար, հարկ է անդրադառնալ արաբա-հայ վաղ մերձեցումների հարցին։ Նման շփումների զոյության վերաբերյալ պահպանվել են ոչ միայն հայկական, այլև օտար աղբյուրների վկայություններ, որոնց համաձայն նման մերձեցումները կարող էին տեղի ունենալ ոչ միայն 610 թ. հետո, այլև

* Հոգվածը տպագրվում է մտքերի փոխանակության կարգով։

¹ H. Hübschmann, Die Semitischen Lehnwörter im Altarmenischen («Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft», 1892, S. 226—268 (ZDMG), նույնի Armenische Grammatik, I, Leipzig, 1895, S. 259—280), նույնի, Սեմական փոխառյալ բառեր հայերենի մեջ («Ազգային մատենադարան», ԺԾ, Վիեննա, 1894, էջ 1—70). այսուհետև՝ Հ. Հյուբշման, Սեմական փոխ...։

² Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 49 (այս և հետագա ընդգծումները մերն են—Ն. Մ.)։

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), մաս 2, Երևան, 1951, էջ 169—179, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 222, նույնի, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 62 և այլն։

շատ ավելի վաղ, երբ արաբական բռնավոր բաղձաթիվ ցեղեր սկսեցին բնակություն հաստատել Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում⁴։

Սիրիայի և Միջագետքի հյուսիսում մ. թ. ա. IX—VIII դդ. արաբական ցեղեր հայտնվելու վերաբերյալ ամենահին վկայությունները կարելի է թաղել ասորա-բաբելական սեպագիր աղբյուրներից։ Այսպես, օրինակ, Սալմանասար III-ի արձանագրություններում (853 թ. մ. թ. ա.) նրանք հիշատակվում են արալ անվամբ։ Աստվածաշնչում հիշվում են ոչ միայն արաբ, իսմայել և ազարացի անվանումներով⁵, այլև սարակինացի⁶, արուալիկ (=aroel)⁷, Հոռմեական, հունա-բյուզանդական աղբյուրներում այս արաբներն անվանվում են սարակինոսներ։ Ինչպես նաև կամ սարացիներ (=saracini), որ ծագում է եբրայերեն սառակ՝ քալանոդ, ավարառու մականունից⁸։ Նրանք զբաղեցրին Օսրոյենից և Միզդոնիայից հարավ ընկած տափաստանա-անապատային տարածքը և հետագայում տարածվեցին Ասորեստանից հյուսիս։ Ասորական աղբյուրներում նրանց երկիրը անվանվում է Beth 'Arabay Ե ալիսըն՝ Արաբների տուն (իմա՝ Արաբների երկիր, ինչպես ունենք նաև հայերենում կաղմեալ տուն, Անգել տուն, Սասնա տուն և այլն)։ Միջնադարի հայկական աղբյուրները նրանց և նրանց զբաղեցրած տարածքը անվանում են Տանիկ⁹ (կամ սանման տանկաց, կողման տանկաց), Արաբիա, Արուստան (կամ Արուեստան, Արվաստան, Արուացաստան), ինչպես նաև սարակին, սարակինոս, հագարացի (ագարենացի), արոնացի և այլն։

Հին աշխարհում այս արոնացի արաբներին (=Arabes Aroel) տարբերում էին Արաբական թերակղզու կամ հարավային արաբներից, որոնց զբաղեցրած տարածքն ավելի շատ հայտնի էր «երջանիկ Արաբիա», «Ժայռային Արաբիա» կամ «Սաբայի թագավորություն» անվանումներով։ Հայ իրականության մեջ գերազանցապես արմատացած էր տանիկ անվանումը՝ Մծբինից հարավ, եփրատից հարավ-արևմուտք և մինչև Ասորիք ընկած տարածքի արաբներին որակելու համար¹⁰։ Հետագայում, սակայն, տանիկ սկսեցին անվանել իսլամ կամ մահմեդականություն ընդունած մյուս ժողովուրդներին նույնպես, որն էլ պատճառ հանդիսացավ աստիճանաբար մոռանալու տա-

⁴ Արաբա-հայ վաղ շփումների հնարավորության մասին ակնարկներ կան մի շարք հեղինակների մոտ, որպիսիք են՝ Էսգևթ, Սեմիտական բառեր հին հայերենում (Երևան, 1915, ԽՖ 2, է—Ը, Թ—Ժ), Հ. Մոմչյան, Հայ լեզուն արաբ բերելի մեջ և փոխադարձաբար, Բեյրութ, 1960, Մ. Մուրադյան, Արաբական փոխառությունները միջին դարական հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր», 1967, № 2, էջ 29—40), Ա. Գաբյան, Ակնարկ հայ-արաբ մշակութային կապերուն վրա (սեջեր զրականության և արվեստի, Բեյրութ, 1972, էջ 40—71)։

⁵ Մենդ. 16. 1. 15, Գաղ. 4. 24., Բարուք. 3. 23., Ա. Մնաց. 5. 19.։

⁶ Ա. Մնաց. 5. 19., Սաղմ. 82. 7.։

⁷ Մակար. 11. 17., 39, 5. 39.։

⁸ «Բառգիրք Հայկազեան լեզուի» (Բառարան յատուկ անուանց), հ. 2, Վենետիկ, 1769, էջ 5։

⁹ Տանիկ բառը հնդեվրոպական ծագում ունի. հմմտ. ուս. Դեյն Գ. Բուսելս, իրան. իրազի «վազդո»։ Հայերենում տանիկ-ը ունի նաև «վազդո, արագացնաց» նշանակություն, ինչպես՝ տանիկ ձի, տանիկ ուղտ, երիվարս տանիկ և այլն, տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 6, Երևան, 1926—1935, էջ 760—764 (այսուհետև՝ ՀԱԲ)։

¹⁰ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը բոտ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 40, 112, նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 837։

նիկ-ի առաջ հասկացողությունը: Օրինակ, ներկայումս տասիկ ենք անվանում թուրքերին, իսկ տաճիկներին՝ արաբ:

Մ. թ. ա. IV—III դդ. արդեն Տիգրիսի և Եփրատի միջին հոսանքներում, պատմական Հայաստանի հարավում ալաբական բազմաթիվ ցեղեր ղգալի կշիռ էին ձեռք բերել: Աստվածաշնչի վկայությամբ մի ճակատամարտի ժամանակ նրանց հանած զորքի թիվը հասնում էր 5500-ի¹¹:

Հայ աշխարհակալների տիրապետության տարիներին հայախոս և սեմախոս մեծ դանգվածների վերաբնակեցումներ են տեղի ունենում: Ինչպես Ա. Գուտշմիդն է գրում, մ. թ. ա. 53 թ. Կրասոսի արշավանքի ժամանակ, խառանից ոչ շատ հեռու, դեպի հյուսիս ձգվող բլրաշարքերի վրա բազմաթիվ հայաբնակ գյուղեր ու ավաններ էին գոյացել: Նա վկայակոչում է Ապպոդոնիոս Տիանացուն, որը մ. թ. 44 թ. ճամփորդել է Իաշտային Միջագետքում, բազմաթիվ հայաբնակ գյուղեր է տեսել նաև արաբական վաշկատուն ցեղերի միջև¹²:

Հռոմեական և ապա բյուզանդական տիրապետության շրջանում արաբական բուլվոր ցեղերն այստեղ իրենցից ներկայացնում էին ղգալի մի ուժ, որոնց հետ հաշվի էին՝ նստում Հռոմն ու Բյուզանդիան՝ կնքելով պայմանագրեր: Նրանց հարաճուն դերի բարձրացմամբ է պայմանավորված բյուզանդական արքունիքի սահմանած ոռճիկը արաբական այն ազդեցիկ ցեղերի համար (կինդյաններ, թալաթյաններ, սկինյաններ), որոնք կայսրության սահմաններն էին հսկում պարսկական ոտնձգություններից¹³: Իհարկե, ոչ բոլոր արաբական ցեղերն էին բյուզանդասեր բաղաբականություն վարում, նրանց մի ղգալի մասն էլ (լահմյաններ, հիմյարներ, սկինյաններ) վարում էին պարսկասեր բաղաբականություն, հաճախ էլ զրժում ղաշիների ուխտը¹⁴:

Հենց այս արաբների հետ է ղաշնակցում հայոց արքայից արքա Տիգրան II-ը, որոնց բնակեցնում է բարավանային ուղիների երկայնքով և հանձնարարում արքունի մաքսի ու բաժի գանձումը: Նրանք Տիգրանին արաբական նժույզներ ու այրուձի են տրամադրում, ինչպես նաև պարտավորվում են ապահովել բարավանների անվտանգ երթևեկությունը¹⁵: Հենց այս ժամանակներից էլ արաբները վերջնականապես հաստատվում են Եփրատի կարևոր գետանցում՝ Զեզմայում և Կիլիկիան Ասորիքից բաժանող Ամանոսի լեռնանցքում¹⁶:

¹¹ Մակար. Բ. ԺԲ. 10.

¹² A. Gutschmid, Kleine Schriften, III, S. 64, տե՛ս նաև Ծ. Քասունի, Հայ մշակութի պատմությունը, Բելրութ, 1954, էջ 197, Ա. Արրահամյան, Համառոտ ուղագիծ հայ ղաղթավայրերի պատմության, Տ. Բ. Երևան, 1967, էջ 36:

¹³ Н. В. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв. М.—Л., 1964, с. 30 և հտ.

¹⁴ Նույն տեղում, էջ 30, 78, 82 և հտ.: G. Rothstein, Die Dynastie der Lahmidien von Al-Hira, Berlin, 1899, S. 358—359, G. Ollender, The Kings of Kinda Lund, 1927, p. 45.

¹⁵ Strabonis, Geographica, recogn. A. Meineke, I—III, Lipsiae, 1915—1925, XVI 2, 27, XI, 14, 6, Ա. Մ. Պարագաշյան, Քննական պատմություն հայոց, Տ. Բ. Քիֆիս, 1895, էջ 134, 136, 143, Ա. Սուրմեյան, Պատմություն Հայկաի հայոց, Տ. Ա. Սուրիա, Հայկա, 1940, էջ 884—885, «Հայ ժողովրդի պատմություն», Տ. 1, էջ 570, 572:

¹⁶ P l u t a r c h, Vitae parallelae, I—4, Lipsiae, 1914—1939, p. 21, Plinii Secundi — C. Naturalis historiae, vol. I—10, Cambridge, Mass—London, 1950—1962, VI, 28, 142, «Հայ ժողովրդի պատմություն», Տ. 1, էջ 570, 572:

Հետագա դարերում նույնպես չի ընդհատվում արաբների հոսքը դեպի Հյուսիսային Միջագետք և, ինչպես իրավացիորեն ն. Աղոնցն է նկատում, Սասանյանների կործանման հարցում հիմնական դերերից մեկն էլ վերապահված էր նրանց. «Արաբական հայտնի և ազդեցիկ ցեղերը վաղուց բույն էին դրել Հայկական Միջագետքում: Անապատի որդիները դյուրավ տապալեցին Սասանյանների աշխարհաստան լեռնաշխարհի մասամբ այն պատճառով, որ ցեղական հենարաններ ունեին զլխավոր ճանապարհների վրա: Դարերի ընթացքին արաբական հեղեղը հոսել էր կամացուկ և լճացել Ծփրատ և Տիգրիս գետերի տափաստաններում՝ ծնունդ տալով մեծամեծ իշխանական տներին, որ բնական հանգրվաններ դարձան նորեկ աշխարհակալների համար»¹⁷:

Հավանաբար, Միջագետքում հայ բնակչությունը մնում էր դեռևս ստվարաթիվ Հայաստանի քաղաքական դերի անկումից հետո ևս, ինչպես իրավացիորեն նկատում են Յ. Մարկվարտն ու Ա. Աբրահամյանը: Յ. Մարկվարտը գտնում է, որ V դարում Միջագետքում բավականի թվով հայ բնակչություն էր ապրում, այդ երևում է այն փաստից, որ 410 թվականին Սահակ Պարթևի հրավիրած սյունհոգոսին մասնակցել են Մծբինի թեմի ներկայացուցիչները, իսկ Մծբինի թեմի մեջ մտնում էին Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, Բեմինեն, Կորդուքը և Միջագետքի մի քանի այլ վայրեր»¹⁸: Ըստ Ա. Աբրահամյանի, «հայ զաղթավարի դյուցազուններ V—VI դարերում փաստվում է նաև հայոց Քրիստափոր կաթողիկոսի (539—545) մի գրությամբ, ուր նա ուղարկել է Ասորեստանի և Խուժաստանի հայ համայնքներին... Տեղեկություններ կան, որ Քրիստափոր կաթողիկոսը ինքն անձամբ ղեկավարել է Միջագետքի հայ զաղթավարը, շրջել է այնտեղ և անհրաժեշտ հանձնարարություններ տվել: Բնական է, եթե Միջագետքում մեծաթիվ հայ հատվածներ չգտնվեին, անիմաստ կլինեին կաթողիկոսի նման գրությունը կամ անձամբ նրա այցելությունը»¹⁹:

Ոչ անհիմն ձևով Աշխարհացույցը Միջագետքի այս տարածքը անվանում է Միջագետք հայոց: Հայ մատենագիրների վկայությամբ Հայաստանի հարավային սահմանները ձգվել են մինչև «սահմանս տաճկաց», որի համար էլ հայոց Պապ թագավորը բյուզանդական կայսեր դիմելիս ընդգծում է մինչև Ուռհա (Նդեսիա) քաղաքը հայոց նախնիներին պատկանելու փաստը. «Եթե Կեսարեա հետ եւ տասն քաղաք մեր լեալ է արդ ի բաց տուր. եւ Ուռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց»²⁰: Սերբոսը պատմում է, որ Արշակն իր որդի Փոքր Արշակին թագավորեցրեց «ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի: Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուստուան առ Երկրան Տանկաց և առ Երկրան Ասորուց»²¹: Սերբոսից տեղեկանում ենք նաև Սասանյանների դեմ մղվելիք պայքարին դաշնակցելու դեպքում Վահրամի տված խոստումները Մուշեղին՝ Հայաստանին պատկանող բոլոր հողերի վերադարձման մասին, որոնց մեջ հիշատակվում են Արվաստանն ու Մծբինը. «Եւ թողում ձեզ զամե-

17 Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 54:

18 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 37:

19 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 37. Ե. Վ. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցիների հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 120, 124:

20 Փաստոսի Ռիզանդացու պատմություն Հայոց, Տփղիս, 1912, էջ 346:

21 Պատմություն Սերբոսի եպիսկոպոսի ի Հերակլես, Թիֆլիս, 1912, էջ 13:

նույն երկիրն Հայոց մինչև ցկապկո՛ւ և ցղուն Աղուանից. և յԱսորոց կողմանի՝ զԱրուստան, զԼժրին և զնոր Շիրական մինչև ցոսհման Տաճկաց, զի առ նախնեալն իսկ ձեզ լեալ է. և ընդ արեմտս մինչև ցկեսարիա Կապադոկացոցս²², Մեծ Հայքի կազմից Արվաստանը Մծբին կենտրոնով խլվել էր 37 թ. պայմանագրով²³, ուր, լնականաբար, հայ բնակչությունը գոյատևվում էր դեռ երկար ժամանակ՝ Այսպիսով, Արվաստանը ոչ միայն սահմանակից է եղել Հայաստանին, այլև երկար դարեր Մավղերի (Տուր-Աբդինի) հետ միասին կազմել է Միջագետք Հայոցի բաղկացուցիչ մասը²⁴, Հետևաբար, Հ. Հյուբշմանի հայտարարությունը, թե «Հայր տեղովով զատված էին արաբացիներն», ճիշտ չէ և հերքվում է հայ ու օտար աղբյուրների բազմաթիվ վկայություններով։ Չարմանալի չէ, որ մինչև արաբների կողմից Հայաստանի նվաճումն արդեն բազմաթիվ արաբներն կամ արաբ-ասորական կոյուններն հատուկ բառեր փոխանցվել էին հայերենին և դրանք որոշ հնչյունական օրինաչափություններով տարբերվում են VII դ. և ավելի ուշ կատարված փոխադրություններից։

Ստրաբոնը, վկայակոչելով իր նախորդներին, մասնավորապես Պոսեյդոնին, հայերին, արաբներին, ասորիներին (արամեացիներին) ծագումնաբանորեն կամ լեզվով և կենցաղով համարում է միևնույն ժողովուրդը. «Նրեք ժողովուրդ ապրելով հարևանությամբ, ազգակցություն են ի հայտ բերում միմյանց մեջ և կոչվում են նման անուններով. առաջինները՝ արամեներ, մյուսները՝ արամեացիներ, իսկ երրորդները՝ արամրներ. կլիմայական պայմանների պատճառով միևնույն ժողովուրդն է՝ զատված երեքիս»²⁵։ Երեք դրացի ժողովուրդների մասին նման եզրակացություն համար, անշուշտ, հիմք ծառայողը միայն նրանց անվանումների մեջ եղող արտաքին նմանությունը չի եղել։ Հելլենական և հուհելենական շրջանում, մինչև քրիստոնեության վերջնական ձևավորումը, այստեղ կրոնական խտրականությունից զերծ հասարակական-քաղաքական բարենպաստ պայմաններ էին ստեղծվել, որոնք էլ նպաստում էին հիշյալ ժողովուրդների մերձեցմանը՝ լեզվով, կենցաղով, տարազով և այլն։ Եթե Պապ թագավորն ընդգծում էր Ռուհա քաղաքի հայոց կողմից շինված լինելու հանդամանքը, ապա նույն հայ պատմիչների մոտ, քիչ արդեն ուշ, Ռուհան, Մծբինը, Ամիղը, «Ասորոց» երկիր են կոչվում²⁶, Եթե հռոմեական աղբյուրները Աբպարի գերդաստանը համարում են արաբական, իսկ Ռուհայաստանի բնակիչներին՝ արաբներ, ապա Մ. Խորենացու մոտ Արշամի որդի Աբպարը (Աբգարը) կրում է «արքայ հայոց» տիտղոսը,

22 Նույն տեղում, էջ 59։

23 Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40։

24 Նույն տեղում, էջ 40 և 71, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 719, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 9 («Հին հունական աղբյուրներ. Ա. Հովսեփոս Փլավիոս, Գիոն Կասսիոս»), Երևան, 1976, գիրք XX, 67։ Հ. Փլավիոսը, խոսելով Արտաքանեսի կողմից Իզատեսի տրված շնորհումների մասին, գրում է. «Նաև պարզենց նրան ընդարձակ և բերրի մի երկիր, այն վերցնելով հայոց թագավորից։ Այդ երկիրը կոչվում էր Նիսիբիս (իմա՝ Մծբինն իրեն ենթակա տարածքով)»։

25 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, пр. 2, с. 396—397.

26 Փավստոս Բուզանդ, էջ 122, 189, Կորիւն, Պատմութիւն վարուց ևւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Թիֆլիս, 1913, էջ 13—14։ Այստեղ գրված է. «...և երթեալ հասաներ ի կողմանս Արամի՝ ի քաղաքս Երկուս Ասորոց, որոց առաջինն Եգեսիա կոչի, երկրորդն Ամիղ անուն»։

ինչպես տեղեկանում ենք նրա՝ Տիրեբրիոսին, Ներսիսին, Արտաշեսին հղած թղթերի ստորագրությունից²⁷։

Զկասկածելով Մ. Խորենացու Աբգար բառի կեղծ ստուգաբանությանը, հայ ավանդական պատմագրությունը նրան ընկալում էր որպես հայ թագավորի Օրինակ, Մ. Չամչյանը հենվելով Մ. Խորենացու Աբգար «կոշիւր աւագ այր՝ վասն առաւել հեղութեանն և իմաստութեանն» արտահայտության վրա²⁸, պարզաբանում է. «...այլ ասորիք և յոյնք ոչ կարելով ուղիղ արտասանել զանուանակոշութիւնս աւագ այր կէսք Աւագար կոչէին, և կէսք Ապակար. մինչև հասարակ անուամբ կոչիլ նմա Աբգար. իսկ ասորիք սովորեցան անուանել Ագպար՝ որ նշանակէ աւագ կամ մեծ և զի զայս անուն ևեթ տային նմա, բուն անուն նորայ ոչ յիշատակեցաւ»²⁹։ Իրականում եղել է հակառակը. հայկական Աբգար-ն է առաջացել սեմական Աբլար (քապիր) «մեծ, գերագոյն» բառից։ Աբլարներին տիրապետության տակ գտնվող հայ բնակչությունը նրանց գերզատանը համարում էր իր հարստությունը։ Այս շրջանում հայկական զահին արաբական ծագումով իշխողների շատ ենք հանդիպում։ Այսպես, օրինակ, Ունեմուսը (140—143 և 157—159 թթ.), որ սերում էր Եմեսայի արքայական տնից և որի պապը նույնպես թագավոր էր կարգված Մոփքում Ներոն կայսեր կողմից 57 թ.³⁰, ծագում էր արաբական ադդեյիկ ցեղերից։ Այս գերզատանների արաբական ծագումն ընդունում են Ա. Գարագաշյանը, Հ. Մանանդյանը, Ե. Քասունին, Ա. Դարյանը և ուրիշներ³¹։ Ա. Դարյանը այս կապակցությամբ գրում է. «Ունեմուսի (Եղեմիա) Աբգարներու թագավորությունը՝ Ն. ք. 132-ին, հիմնող գերզատանը արաբ էր, որ հետո Պարթևահայ և Ադյուբեինացի գերզատաններու արյունով պատվաստվեցավ ամուսնությամբ»³²։

Իսկ լեզվական առումով ինչպիսի՞ հարաբերության մեջ էին գտնվում խնդրո առարկա տարածքի ասորի, արաբ, հայ և մյուս ժողովուրդները, և եթե արաբները դեռևս գրականություն չունեին, կարո՞ղ էին որևէ չափով ազդել տիրապետող ասորերենի և նրանով հաղորդակցվող ժողովուրդների լեզուների վրա։

Ինչպես մասնագետներն են հաստատում, նույն սեմական լեզվաբնույթին պատկանող արաբների և ասորիների համար հաղորդակցվելը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում, որի պատճառով էլ այստեղ, նրանց լեզուների խառնուրդից, աստիճանաբար գոյացավ մի միջին լեզու, որն անվանում են ասորա-արաբական կոյնն։ Ահա թե ինչ է գրում այս մասին Ն. Վ. Պիգուլևսկյան. «Ասորիները, տիրապետելով ազգակից արաբերեն լեզվին, նրանց հետ գտնվում էին մշտական շփման մեջ, նրանք խոսում էին ասորա-

²⁷ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 148—151։

²⁸ Մ. Խորենացի, էջ 137, Ա. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 257—259։

²⁹ Մ. Չամչյան, Խրախճան պատմութեան հայոց, Վենետիկ, 1851, էջ 50—51։

³⁰ Ե. Քասունի, Նշվ. աշխ., էջ 193, 223։

³¹ Ա. Գարագաշյան, Նշվ. աշխ., մասն Գ, էջ 257—259, Ա. Դարյան, Նշվ. աշխ., «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 9 («Հին հունական աղբյուրներ. Ա. Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասիոս»), գիրք 59, 12, 2, գիրք 71, 31, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, մաս Ա, Երևան, 1956, էջ 38, 327, 340։

³² Ա. Դարյան, Նշվ. աշխ., էջ 40—71։

արարական կոյնեի յուրահատուկ բարբառով»³³։ Արարներն ու ասորիները կենդանի հաղորդակցության ժամանակ օգտվում էին յուրակերպ ասորա-արարական կոյնեից»³⁴։ «Հնարավոր է, որ ամենից շատ տարածված էր յուրահատուկ բարբառ, խառն, խոսակցական մի լեզու բաղկացած ասորական և արարական բառերից»³⁵։

Ասածից պարզ է դառնում սեմական բառերի հայերենին փոխանցող այն ակունքը, որ պայմանականորեն անվանվում է ասորա-արարական կոյնե։ Սա այն երրորդ ակունքն է, որ ենթադրում էին Հ. Հյուբշմանն ու Հ. Աճառյանը։ Ահա թե ինչու էին «շեղվում» հնչյունական օրինաչափություններից «ասորական» հորջորջվող հայերենի 211 փոխառություններից 82-ը, որոնք շունեն ասորիներին հատուկ սաստկական ձևի (status emphaticus) -a (= հայ. -այ) վերջավորությունը կամ «շեղվում են» սպասվող ձևերից, ինչպես, օրինակ, -մաֆս (մաֆս-ի փոխարեն), արա (ալա կամ ավա-ի փոխարեն)³⁶։ Սակայն այստեղ առկա է մի պայմանականություն՝ այս շրջանում, սեմական լեզուներից հայերենի կատարած փոխառությունների «ասորական», «արամական» և «արաբական» հորջորջումների մեջ ասորա-արաբական կենդանի խոսակցական լեզուն ոչ մի փաստաթղթում արձանագրված չէ, գրավոր փաստաթղթերը միայն ասորիներն ու արամեներն են՝ այն էլ ոչ ժողովրդական-խոսակցական տարբերակով, այլ միայն գրասենյակային-պաշտոնական գրքային քարադրած վիճակով, որը չի արտացոլում իրական վիճակը։ Իսկ արաբները գրավոր արձանագրվեց մի քանի հարյուրամյակ ուշ և սա նույնպես տիրող խոսակցական լեզվի իրական արտացոլումը լինելուց շատ էր հեռու։ Այս իսկ առումով էլ սեմական լեզուներից հայերենին անցած փոխառյալ բառերի այն մասը, որոնց համապատասխանող ձևերը պահպանված ենք գտնում ասորիներում, կոչում ենք ասորերեն փոխառություններ, իսկ այն մասը, որ գտնում ենք արաբերենում՝ արաբերեն փոխառություններ, որ, բնականաբար, իրականությանը միայն մասամբ է համապատասխանում։ Ուստի, նպատակահարմար է ընդունել նաև երրորդ ակունքից՝ ասորա-արարական կոյնեից կատարված փոխառությունների փաստը նույնպես։

Ինչ խոսք, որ սեմական նստվածքն ավելի մեծ և ավելի հարազատ հնչմամբ պահպանվելու էր ասորա-արաբական կոյնեի տարածման կամ ազդեցության ոլորտին մոտ գտնվող հայերեն բարբառներում (Արածանի—Եփրատ հովտի, Տարոնի, Կիլիկյան խմբի և, մասնավորապես, Եղեսիայի, Ակնի, Բալուի, Խարբերդի, Ամիդի, Սասնո, Շատախի, Սոկսի, Ողմի, Զեյթունի, Մաքաշի, Հաճընի և այլն), որոնք էլ հենց սեմական բառերը ընդհանուր հայերենին փոխանցող հիմնական օղակներն են եղել։ Այս մասին ունենք ճշմարիտ մի գեղեցիկ վկայությունը այս «շար շունչ, ոգի» բառի ծագման վերաբերյալ. «Այսն հոգմ է, և հոգմն՝ ոգի... քանզի յորժամ մեք ասեմք՝ թէ սի՛ր շնչէ, ստորենայք ասէն այս շնչէ»³⁷։ Այս վկայությունն արժեքավոր է կրկնակի առումով, որովհետև «ստորիներին» (իմա՝ հարավային նահանգներին) խոս-

33 Н. В. Пигулевская, *Եզ.* աշխ., էջ 10։

34 Նույն տեղում, էջ 18։

35 Նույն տեղում, էջ 62։

36 Հ. Աճառյան, ՀԳ, մաս 1, Երևան, 1942, էջ 336—342, 350։

37 «Եղեզկա վարդապետի Կողբաքվոյ եղծ պանդոց», Թիֆլիզ, 1911, էջ 65։

վածքների տարբեր լինելը շեշտելու հետ միասին այն հաստատում է նաև սեմական բառերի հայերենին փոխանցող **ܐܠܗܐ** հարավ լինելը Եվ իսկապես, այս-ը սեմական, ասորա-արաբական կոյնից փոխառյալ մի բառ է, որ պահպանվել է նաև արաբերենում **إله** *alā*, **إله** «մոլեգնել, կատաղել, վայրագանալ, շարանալ», **إله** *fasāda* «չարություն սերմանել» նշանակություններով³⁸ (հմտ. հայ. այսուհետևի **ողիվահար** լինել, շարանալ, մոլեգնել, այսուկամ **սատանաներ, շարքեր**, այսուկիր **ողիվոտ, շար ոգի կրող** և այլն)։

Հայ մատենագիրները շարունակ ընդգծել են ծայրամասայինների լեզվի կենտրոնականների նկատմամբ մեծ տարբերություններ ունենալու՝ «ծերական», «մթին» և «խրթին» լինելու հանգամանքը՝ Օրինակ, Դիոնիսիոս Թրակացու Քերականության թարգմանիչ-մեկնիչները (Դավիթ, Անանուն, Մովսես Քերթոզ, Ստեփանոս Սյունեցի և այլք) շեշտում են բաղմամբիվ բարբառների հետ միասին Կուրմայ կամ Կուրդուիի «եղերական»՝ ծայրամասային բարբառի գոյությունը դեռևս իրենց ժամանակներում (VI—VII դդ.)³⁹, որը նույնպես սեմական մեծ նստվածք ունեցող բարբառներից մեկն էր։ Հայաստանի հարավային բարբառների սեմական նստվածքի մասին բաղմիցս ընդգծվել է հայագետների կողմից, ինչպես, օրինակ, Հ. Հյուբշմանն է գրում. «Ծոփաց և Աղծնյաց մեջ անշուշտ ավելի բաղմամբիվ էին Արամեացիք և Քուրդք՝ ինչպես նաև Մոկք և ի Կորճայք...»⁴⁰, Ն. Աղունցր գրում է. «Նրանցում բնակչությունը միշտ եղել է կաղմությամբ խառը... հայ-ասորական և հայ-կորճայական»⁴¹, Գ. Ղափանցյանի կարծիքով «մեր այս հարավի հայերը (խոթեցիք-սասունցիք և այլն) մեծ մասամբ կիսասեմական կամ նախնական սուբարյան ցեղերից են»⁴²։ Այս մասին ավելի ստույգ տեղեկություններ ենք գտնում IX—X դդ. հայ պատմիչ Թ. Արծրունու մոտ. «Առիւն եմ գտնահի Ասորոց, որ շունցին զկնի Աղրամելեայ և Սանասարայ որդւոյ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասարայ զինքեանս անուանեն. և ևն հիրասէրք, օտարընկալք, պատուադիրք. կէսքն վրիպեալք ի բնական հայրէնի լեզուէն յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյլք միմեանց հանդիպեալք և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւր։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն միմեանց, մինչև թարգմանչաց անգամ կարօտանան»⁴³։

Ուստիում միմյանց հետ թարգմանիչներով խոսելու այս վկայությունից հիշելով, Հայաստանի հարավի բարբառները որոշ մասնագետներ (Հյուբշման, Տոմաշեկ, Աճառյան) նույնիսկ համարում են օտար լեզուներ⁴⁴։

³⁸ X. K. Бранов. Арабо-русский словарь, М., 1962, с. 707 (այսուհետև՝ АРС).

³⁹ Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 14.

⁴⁰ Հ. Հյուբշման, Հայկական հատուկ անունք, Վիեննա, 1894, էջ 127, ծան. 1:

⁴¹ Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 397.

⁴² Գ. Ղափանցյան, Ասորա-բարբառական բառեր հայերենում (ՀՈՍՏ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1945, № 3—4, էջ 33):

⁴³ «Թոփմայի վրդ. Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 203—204:

⁴⁴ Н. Hübschmann, Armenische Grammatik, S. 519 Տե՛ս նաև Հ. Աճառյան, ՀԳ, մաս 2, էջ 129—141:

Անդրադառնալով հայերենի սեմական նստվածքի հարցին, ինչպես նաև զրանում վաղ արաբական կամ ասորա-արաբական (արամեա-արաբական) փոխառությունների տեսակարար կշիռն, պիտի ընդգծել, որ այն հայերենի սեմական նստվածքի ամենահին շերտը չէ, այլ նրան, հավանաբար, նախորդել են արամեական և ակկադական շերտերը, որոնք էլ հենց հանդիսացել են հայերենի սեմական էստաֆետի սկիզբը:

Այսպես, օրինակ, սեպագիր ակկադական տեքստերից հայտնի է, որ շաղգամը թարմանիական (կամ հայկական) բույս է կոչվել ŠAM laḫat Armanni, որը գտնում ենք նաև արաբերենում >ܠܚܬ ܫܐܠܓܡ ܕܠܚܬ⁴⁵, սակայն հայերենի համար ܫܐܠܓܡ պատճառով շողգամ/շաղգամ-ի ակունքը արաբական šalgām-ը չէ, այլ երկուսի համար էլ՝ մի երրորդ ակունք, մանավանդ, որ այդ մատնում է նրա քառաբաղաձայն կադմությունը, նման քառաբաղաձայն կադմություն ունի նաև հայերեն սերկևիլը (սերգևիլ), որ կա նաև ակկադերենում supurgil(l)u, իսկ արաբերենում ܫܠܓܐܠ safargal ևս⁴⁶: Այս բառը իր քառաբաղաձայն կադմությամբ նույնպես քիչ է հավանական, որ սեմական ծագում ունենա, իսկ դարձյալ արաբերեն զուղահեռի՝ ܪ-ի պատճառով safargal-ը հայերենի համար փոխատու ակունք չէր կարող ծառայել, այնպես հայերենում պիտի ունենայինք նույնպես սափաբալ կամ սաֆաբ-⁴⁷ Ժեր, սակայն ակկադերենը կամ մի երրորդ ակունք կարող էին հիմք լինել թե՛ հայերենի և թե՛ արաբա-ասորական կոյնենների համար, որոնք բազմաթիվ ոչ սեմական բառեր փոխանցեցին ինչպես հայերենին, այնպես էլ հարեվան մյուս ժողովուրդներին:

Հայերենի սեմական նստվածքն ըստ ժամանակահատվածների ստորաբաժանելու խնդրում թեև կան դժվարություններ, երբ փոխառյալ բառը նույն հնչումն ունի բոլոր սեմականներում (ակկադերեն, արամեերեն, ասորերեն, ասորա-արաբական խոսվածքներ, եբրայերեն, արաբերեն), սակայն հայերենի սեմական էստաֆետի մեջ խիստ կարևոր է վաղ արաբա-հայ կամ ասորա-արաբա-հայ շփումների բացահայտումը, որ հնարավորություն է տալիս ոչ միայն շղթայի բոլոր օղակները վերականգնելու, այլև բռնազբոսիկ «հնդեվրոպական» և «պատահական նմանություն» պիտակն ստացած շատ արաբերեն բառերի ստուգաբանությունը ճշտելուն:

Այժմ անդրադառնալով արաբների կողմից Հայաստանը նվաճվելուց 200—250 տարի առաջ հայ մատենագրության մեջ օգտագործված այն արաբերեն բառերին, որոնք հայերենին պիտի փոխանցված լինեն ասորա-արաբական կոյնեից և վերահաստատված կարող են լինել արաբերենի միջոցով (կամ արամեերենի ասորական բարբառի միջոցով, ուր, սակայն, զրանք չեն պահպանվել): Այսպես՝

1. կալատ «բողի միջնորդ»:

Օգտագործված է Ոսկերբերանի «Մեկնութիւն Մատթէոսի» հետևյալ հատվածում. «Եւ անշափ կալատութեան բանս եւ գործս անամօթութեան գործէն»,

⁴⁵ W. von Soden, Akkadisches Handwörterbuch (= AIW), Wiesbaden, 1962, S. 69, F. D e l l i t z s c h, Assyrische Handwörterbuch (= AIH), Leipzig, 1896, S. 135, X. K. Baḡd a d i n, APC, c. 521

⁴⁶ W. von Soden, AIW, S., 1061, նաև X. K. Baḡd a d i n, AI C, c. 452.

նույնն է արաբ. 𐤒𐤓 𐤒𐤁𐤎𐤕𐤁-ի հետ: Սակայն Հ. Հյուբշմանը եզրակացրել է. «այս բառն կամ հետո մոծված է հոս, կամ այլ ազգ պետք է կարդալ» և տարակուսանքով եզրափակում է. Ե դարձնե՞նք⁴⁷:

2. Ուսյ «դրոշ, նշան»:

Օգտագործված է Ոսկեբերանի «Մեկնութիւն Եւայի» և «Մեկնութիւն Պաղոսի Թղթոցն» մեջ. «Անդէն զարդուցն Ուսյ»⁴⁸: Հ. Հյուբշմանը մերժում է վաղ փոխառության հնարավորությունը. «Զի կրնար սպասվիլ, որ արաբերեն փոխառյալ բառ մը գտնվի Ոսկեբերանի մեկնութիւն Եւայ. և Պողոսի Թղթոց մեջ, որ Ե դարու թարգմանված կըսվին... Այս կտորն լուսանցքի գրութիւն կամ դիտողութիւն մըն է...»⁴⁹: Հմտ. արաբ. (= 𐤒𐤓):

3. Խար, Խար-ել:

Բազմիցս օգտագործված է լեւոնաձաշնչում, ինչպես, օրինակ, «Որպէս օձն Խարեաց զԵւա» (Բ. Կորնթ. ԺԱ. 3.), Հ. Հյուբշմանն այս անգամ փորձում է որոնել մեկ այլ բացատրություն, որը հանգում է «պատահականությանը». «...Ըստ ձեռն և նշանակությանը հարմարի հին-արաբ. 𐤒𐤓 𐤒𐤁𐤎𐤕 բառին, բայց փոխառութիւն մ'ենթադրել հոս անհնար է: Ուստի նմանութիւնը լոկ պատահական է»⁴⁹:

4. սիփ «հով, մեղմ հով, քամի»:

Օգտագործված է բազմիցս, օրինակ՝ «Սիփ շնչէ» (Եզեիկ, ԻԳ), նույնն է արաբ. 𐤒𐤓 𐤒𐤁𐤎𐤕-ի հետ:

Մերժելով VII դ. առաջ արաբերենից փոխառություն կատարելու տեսակետը, Հ. Հյուբշմանը, այնուամենայնիվ, դեպի անգղծվածի լուծումը կատարեց մի քայլ՝ կոահելով հայերենի համար փոխատու մի երբեք աղբյուրի գոյությունը, այն անվանելով ասորերենի կամ արամեերենի անհետացած բարբառ⁵⁰. «Սիփ բառին և տառն անկանոնությամբ մտած է. փոխ. զ տառի, ինչպես նաև փոխ. կ: Թերևս հայերեն սիփ արաբ. 𐤒𐤓: «հով» բառին հետ արամեերեն ձևն մը առաջ եկած է, որ և տառով կը սկսենք»⁵¹:

5. շալակ «պարկ, մախաղ, բեռ, պատգարակ, թիկունք, մեջք», շալակ-ել «կրել, մեջքով վերցնել»:

Օգտագործված է բազմիցս, ինչպես՝ «Քաղեաց ի նմանէ աղոխ լի շալակաւ իւրով»⁵² և այլն: Եթե նախորդ բառի քննության ժամանակ ենթադրյալ փոխատու ակունքը Հ. Հյուբշմանը համարում է արամեերենը, ապա այստեղ ալիւացնում է նաև պարսկերենը. «Եթէ բառս (իմա՝ շալակ) արգեն Հին Կտակարանի մեջ կը գործածվի, պետք է, որ աւամեերեն կամ պարսկերեն անված ըլլա»⁵³, Իսկ Հ. Աճառյանը ենթադրում է, որ «ասորական կամ պահլավական աղբյուրից» պիտի լինի (հմտ. արաբ.

47 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 59—60, հմտ. X. K. Баранов, APC, c. 850.

48 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 65, հմտ. X. K. Баранов, APC, c. 355.

49 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 58, հմտ. X. K. Баранов, APC, c. 262.

50 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 10, 37, 41, Հ. Աճառյան, ՀԳ, մաս 1, էջ 349—350.

51 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 41.

52 Գ. Քաղ. Գ. 39.

53 Հ. Հյուբշման, Սեմական փոխ..., էջ 63.

հարավային Հայաստանի հարակից գավառների ասորիները, և որոնց հետ շարունակական հարաբերության մեջ էին հայերը»⁵⁹։

Այսպիսով, Հ. Աճառյանը նույնպես բացառում է հայ-արաբական վաղ շփումների հնարավորությունը և արաբերենից (իմա՝ ասորա-արաբական կոյնեից) հայերենի կատարած փոխառությունները վերագրում է մի ասորական բարբառի՝ որը, սակայն, առեղծվածին մոտենալու առաջին ճիշտ քայլն էր, որովհետև ավելի անիմաստ և անհեթեթ էին նման կարգի սեմական կամ հին արաբական փոխառությունները բռնադրոսիկ հնչյունական անցումներ փոխելով հնդեվրոպական մկրտելը⁶⁰։

7. մահիի թանկողին, հանգստատեղի, մահճակալ»։

Ավանդված է V դ., ինչպես՝ «Դենել պատգարակօք և մահնոֆ»⁶¹, «Կողմենե-ցուցեալ ի մահինս նորա»⁶² և այլն։ Ընթարկվել է կեղծ ստուգաբանությունների, ինչպես մահ-իջումն կամ մահնինչ եղբորից⁶³, մինչդեռ սեմական ծագում ունի, որը մատնում է նրա մա- նախածանցը՝ Արաբերենում ունենք

ماهگا mahga՝ հանգստատեղ, ննջատեղ, հանգստարան», ܡܚܓܐ mahga՝ «հանգստանալ, քնել» արմատից⁶⁴։

8. հաշմ թխեղ, կոտրած, ջարդած, հաշմ-ել թխեղել, կոտրել, փշացնել»։

Ավանդված է V դ., ինչպես՝ «Ծովնաթանու... էր որդի մի հաշմ ոտիք»⁶⁵, «Որ հաշմեալ է ի մարմին իւր»⁶⁶ և այլն։ Նույնն է արաբ. ܚܫܡܐ hašama՝ «կոտրել, փշացնել, խեղել, հաշմել» բառի հետ, սակայն ՀԱԲ-ում նմանությունն արձանագրված է որպես «պատահական»⁶⁷։

9. ախամախ ճհիմար, տգետ, ախմախ»։

Օգտագործված է Ոսկեբերանի մոտ. «Թեպէտ և ախամախ մարդիկ իցեն» նախադասության մեջ, սակայն արաբ. ܐܚܡܐܐܐ ʾaḥmāʾa բառի հետ նույնը լինելը մերժվել է հայերեն մատենագրության մեջ վաղ շրջանում օգտագործված լի- նելու հանգամանքով⁶⁸։

10. սխր-ալի «հրաշալի, հիանալի, զարմանալի», սխր-աճալ ճհիանալ, զարմանալ, ապշել», սխր-ազործ «հրաշագործ», սխր-ապործութիւն «հրաշագործություն, հիացմունքի արարք, գործ» ձևերում առանձնանում է սխր արմատը, որ նույնն է իր հնչմամբ և նշանակությամբ արաբ. ܣܚܪܐ saḥara՝ «հիացնել, դյուլթել, հմայել, կախարդել» բառի հետ, մինչդեռ կապվել է սխուր «վարձ», վրաց. սախուր «հմայք, դյուլթություն» բառերի հետ⁶⁹։

59 Հ. Աճառյան, ՀԳ, մաս 1, էջ 350։

60 Օրինակ, հայերեն խաբ բառն առաջին անգամ արաբ. habb-ից էլ է Ուրոգեբը (տե՛ս նրա Thesaurus, 46, նաև Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 309), մինչդեռ Ն. Մառը փորձում է զենդ. dab, daw «խաբել» բառից, որը նույնն է հայ. դաւ-ի հետ, իսկ պրոֆ. Գ. Զա-ռուկյանը եկեղծում է հ.՝ (s)kabh- «կոտրել, ճեղքել» արմատից (տե՛ս նրա «Очерки дописменного периода по истории армянского языка», «Очерки...», Ереван 1967, с. 111, 118, 142, 203, 305, 308)։

61 Դործք առաքելոց. Ծ. 5.։

62 Գ. Թագ. Գ. 32.։

63 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 759, նաև ՆԶԲ, Բ, էջ 124։

64 X. K. Баранов, APC, с. 1077.

65 Բ. Թագ. Գ. 4.։

66 Սիրար. Լ. 14.։

67 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 43, հմտ. X. K. Баранов, APC, с. 1087.

68 Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 96, հմտ. X. K. Баранов, APC, с. 246.

69 Հ. Աճառյան, ՀԱԲ, 5, էջ 1225—1227, հմտ. X. K. Баранов, APC, с. 437.

բառի հետ⁸³, սակայն ենթադրվում է հ.-հ. *mrd- «տրորել, սղկել» արմատից d ածականով *mēra-ից և կամ հ.-հ. *mrdiō (*mor-)-ից, մայն, մար- չել բառերի հետ միասին⁸⁴։

16. ԴՐԱՆ-ԵՆՈՒ թխրտչել, վախենալ, խույս տալ։

Ավանդված է դասական գրաբարի ժամանակներից, ինչպես՝ «Շրտեան, լքան, կասեցին»⁸⁵։ Հունի վստահելի ստուգաբանությունը ՀԱԲ-ում նրա նմանությունը արար. ڤا ڤا ڤا šurud, širad, šurad «անասունների խրտչելը, փախչելը» բառի հետ համարվում է պատահական⁸⁶։

17. ՂՈՐՔ-ԵՆ ԽԵԼԵՆ, կորզել, հափշտակել, պոկել, կտրել։

Ավանդված է ոսկեդարից։ Ստուգաբանված չէ։ ՇԵՐՈՒ-ԵՆ-Ի հետ միասին ծագում է միևնույն (šr) 𐎱 𐎠 արմատից⁸⁷։

18. ԴԵՐՈՒ ՊԿՈՐՐ, հերձվածք, երիզուկ, փեղկվածք, շերտ-ել «կտրատել, փեղկել, մասերի վերածել»։

Ավանդված է բազմիցս ոսկեդարից, ինչպես՝ «Ծղէզ գշերտսն ի վերա սեղանոյն»⁸⁸ և այլն։ Բառիս ստուգաբանությունը խճճված է, նրա նմանությունը արար. 𐎠 𐎠 šarē և ասոր. šarāi «պատառոտել» ձևերի հետ համարվել է պատահական⁸⁹։ Նույն արմատից են ծագում նաև բարբառային շառտ-ել-ը, շերիտ, շրիտ-ը «կապ»։

19. ՎԻՏԱՆ ՏԵՐՎԱԾ, հուսահատ, անօգնական, վիատ-ել «հուսալքվել, անօգնական մնալ»։

Ավանդված է ոսկեդարից՝ «Մի վիտիցիլս»⁹⁰։ Զուեի վստահելի ստուգաբանությունը նման է արար. 𐎠 𐎠 uahada «մենակություն, առանձնություն» բառին, որ ծագում է hđ 𐎠 𐎠 «հատ» արմատից⁹¹։

20. ՎՐԱՐ ՎԵՆԱՍ, վտանգ, փչացում։

Բազմիցս ավանդված է դասական գրաբարով, ինչպես՝ «Զչինութիւն աշխարհի կանգուն, անվթար»⁹²։ Եղել են ստուգաբանության անհաջող փորձեր, սակայն ավելի հավանական է թվում կապը արար. 𐎠 𐎠 uaddar «վտանգել, կործանել» բառի հետ⁹³։

21. ՎԵՖԵՐ ՎՓԻՆ, սարսափ, վեֆեր-ել «վախենալ, ընկրկել»։

Վկայված է դասական գրաբարով, ինչպես՝ «Անվեֆեր քարոզել»⁹⁴ և այլն։ Փորձել են ստուգաբանել կապելով ի վեֆ իրաց ձևի հետ⁹⁵։ Մինչդեռ հեշտամբ

83 X. K. Баранов, APC, с. 650.

84 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 289, Г. Б. Джаукян, Очерки..., с. 195.

85 Ա. Մակ. Ե. 34.

86 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 545—546, հմմտ. X. K. Баранов, APC, с. 501.

87 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 511, 532.

88 Գ. Թադ. ԺԸ. 33.

89 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 511, 522, Г. Б. Джаукян, Очерки..., с. 113, 143, 261.

90 Երրայ. ԺԲ. 5.

91 Հ. Աճառյան, ՀԱԲ, 6, էջ 691—692, հմմտ. X. K. Баранов, APC, с. 1114—1115.

92 Աղաթանգեղոս, էջ 14.

93 Հ. Աճառյան, ՀԱԲ, 6, էջ 663—664, հմմտ. X. K. Баранов, APC, с. 1117.

94 Աղաթանգեղոս, էջ 213.

95 Հ. Աճառյան, ՀԱԲ, 6, էջ 631—632.

և նշանակությամբ նման է արաբ. *qanaqa* «վախ, սարսափ, տազնասլ», *ya har* «վախեցնել» բառին⁹⁶։

22. վաղկ «արժեք, գին, արժանություն, համրավ», վաղկ-անիլ «համարել, կարծել»։

Ավանդված է դասական մատենագրությամբ. ինչպես «Բրբե զհոռս ին՝ զմեզ վաղկանելով՝ արձակեցար»⁹⁷։ Առաջարկված ստուգարանությունները համոզիչ չեն։ Բովում է, չսխալի անտեսել նմանությունը արաբ. *qanaqa*, *qanaqa* «արժեք, գրամ, վարկ, թերթ, դրամաթուղթ» բառերի հետ⁹⁸։

23. տրուպ «նվաստ, ցածր, ստոր, անարժեք, շեշին, խեղճ, թշվառ»։

Ավանդված է զասական շրջանից, ինչպես՝ «Զի ես իսկ եմ տրուպ առաքելոց»⁹⁹, «Տրուպս եմ ամենայն սրբոց»¹⁰⁰ և այլն։ Անհամոզիչ է բառը հայկ. արմատից բխեցնելը, որի զուգահեռն է դիտվում սլավոն. *drob* «կոստորակ, փոքր» բառը, և այն երևի *tr* առաջացել է հետ¹⁰¹, երբ առկա է արաբ. *tarbu* «ողե, փոշոտ, մոխրե, գետնի» բառը¹⁰² (հմտ. *matrbat* «մորթել»)

АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(До нашествия арабов в Армению)

НЕРСЕС МКРТЧЯН

Резюме

До сих пор в арменистике господствует мнение о том, что первые контакты армян с арабами начались с завоевания Армении арабами в 641 г. Г. Гюбшман и вслед за ним Р. Ачарян и др. существующие в классической армянской литературе (V—VII вв.) арабские слова считали или «поздними прибавками» или «случайными совпадениями». Однако множество исторических и лингвистических данных указывает на существование очень ранних прямых армяно-арабских (или армяно-таджикских, как часто упоминается у армянских историков) контактов, которые можно датировать IV—III вв. до н. э.

Именно с этих пор и начинается проникновение сирийских и арабских слов в южные диалекты армянского языка из так называемого сирийско-арабского койнэ.

Согласно Г. Гюбшману и Р. Ачаряну, существовал также внелитературный путь заимствований, ибо многие заимствования «не подчинялись» фонетическим законам сирийских заимствований. Причина этих отклонений, на наш взгляд, кроется в существовании разговорного живого языка сирийско-арабского койнэ, откуда и были заимствова-

96 Հմմտ. X. Կ. Баранов, АРС, с. 1159.

97 Մ. Կորեկեանի, Գրք Գ. ԻԹ, էջ 323.

98 Հ. Առաքելյան, ՀԱԲ, 6, էջ 608—609, հմմտ. X. Կ. Баранов, АРС, с. 1122—1123.

99 Ա. Կորեկե., ԺԾ. Թ. 1.

100 ԺԺԿ. Գ. 8.1.

101 Հ. Առաքելյան, ՀԱԲ, 6, էջ 1013—1014.

102 X. Կ. Баранов, АРС, с. 121, 122.

ны арабские и «неподчиняющиеся» фонетическим законам сирийского языка семитские слова.

Рассматриваемые здесь 23 заимствования—*կաշառ*, *ռաշ*, *խար-խարել*, *սիր*, *շաշաշ*, *ստշրի*, *մաշիճ*, *հաշմ*, *ախաճախ*, *սիր-սիր*, *ամուլ*, *շոկ-շոկառ*, *նկառ*, *ալաշ*, *մարտ*, *շրտ-ն-ուլ*, *շորթ*, *շերտ*, *վճառ*, *վթար*, *վեհեր*, *վարկ*, *տրուկ* (из около 200 подобных слов арабского языка и сирийско-арабского койнэ), наличествующие в классической литературе армянского языка V—VII вв., вошли в армянский язык еще до прихода арабов в Армению.

В классической армянской литературе арабы назывались *տաճրկ* таджиками, а после принятия ислама таджиками стали называться и остальные народы—персы, турки и т. д., поэтому и у армян предалось забвению исконное значение слова *տաճրկ*.